

ՇՏԵՄԵՐԸՆ

ՊԻՏՄՆԻ ԳԻՏԵԼԵՆՑ

ՀԵՏՈՐ 4.

ՅՈՒՆԻՍ 1. 1842.

ԹԻՒ 42.



Պէտուին Արապներու լսոյ :

Պէտուին բաւր Արաբերէն բաւր մը ազաւաղութիւնն է որ կընշանակէ «Բընակիչ Անապատի» : Ասոնց զանազան ցեղերուն անձնական երևոյթը քիչ տարբերութիւն չունի իրարմէ . բայց ընդհանրապէս միջակ հասակ ու բարակ կազմութիւն ունեցող մարդիկ են , թխագոյն մարմնով ու սև մազերով : Աւժերնին երևելի է ու իրենց արագութիւնը և աչքաբացութիւնը անկից մտ է , բայց ժուժկալութիւն ընելու ու հոգնութեան դիմանալու իրենց զօրութիւնը ամենէն նշանաւոր է , և աս կողմանէ գրեթէ բուն իսկ իրենց ուղտերուն կըհաւասարին :

Պէտուինները վրանաբնակ Արապներ են ու ընդհանրապէս կըբնակին աղբիւրի մը կամ ջրհորի մը մօտերը , և հոն կըմնան մինչև որ իրենց արջառները ճարակելու խտոր հատցունեն : Բայց առանց ջուրի խտուռէտ տեղ մալ գտնան նէ՛ ինչպէս որ երբեմն կըպատահի , քանի մը շաբաթ առանց ջուրի կըհամբերեն : Անտենը իրենք միայն կաթ կըխմեն . ու իրենց արջառներն ալ՝ բաց ՚ի ձիերէն , քանի որ կանանչ ու հիւթաւոր ճարակ կըգտնան առանց ջուրի կըզիմանան : Երբոր արջառներուն ճարակը բոլորովին հաւնի , կըհարկաւորի որ ե

Վրան . շաբաթ :

ղած տեղերնին փոխեն : Մեր վերին պատկերը (որ Լապորտէն Laborde օրինակված է) տեղափոխութիւն ընող Պէտուլիններու կարաւան մը կը ցոյց տայ : Վետինը կայնող մարզիկը վար իջած են աւաղին վրայ իրենց տեսած ոտքի նշանները քննելու համար :

Պէտուլիններուն իրենց մէջը իրարու ցուցուցած հաւատարմութիւնը շատ նշանաւոր է, թէպէտ և ուրիշներուն ստացուածքին անիրաւութիւն ընելը բանի տեղ չեն սեպեր : Թէ որ Պէտուլինի մը ուղտը ճամբուն վրայ իյնայ մեռնի՞ ու ինքը կարող չըլլայ վրայի բեռը վերցունել տանելու, անոր բոլորիքը աւաղին վրայ միայն զիմ մը կը դարձունէ ու կը ձգէ անիկա : Ըս կերպովս ամիսներով առանց զպչելու հոն կը մնայ ան : Սոտ ատեններս ճամբորդին մէկը Ըս զազա երթալու ճամբուն վրայ Ուսովատի Սալ ըսված ձորէն անցնելուն սև վրան մը տեսաւ ծառէ մը կախված : Թուովիք (իբր Ըրասպ ուղեցոյցը) ըսաւ թէ առջի տարին ինքը ան նոյն տեղէն անցնելուն ան վրանը հոն էր, ու բնաւ չի պիտի դողցրվի անիկց : Ուրիշ ճանապարհորդ մը կը պատմէ թէ Ուսովատի Հրմու ըսված ձորին մէջ բարձր ապաւած մը ցուցուցեր են իրեն՝ ուր կից Պէտուլին Ըրասպ մը քանի մը տարի առաջ իր որդին վար նետեր է՝ կապած ձեռքերով ու ոտքերով, զողութիւն ընելուն համար :

Պէտուլիններուն օրէնքին քանի մը գլխաւոր մասերը աս հետևեալներն են : Թէ որ Պէտուլին մը ուրիշին պարտք ունի ու կուրանայ իր պարտքը, պարտատէրը երկու կամ իրեք մարդ կառնէ իբրև վկայ անոր ներանալուն : Ընկէ ետև թէ որ կրնայ նէ՞ պարտքեւան անձին մէկ ուղտը կամ ուրիշ մէկ բանը կը յափշտակէ կամ կը գողնայ, և անիկա ուրիշ մէկու մը պահ կուտայ : Ըսիկա դատը դատաւորին առջևը կը բերէ քննրվելու, ու պարտքեւանը կը կորսընցունէ ան յափշտակված իբր : Պէտուլինները իրենց կուխին մէջը բերով կամ բռնցի իրար ծեծելէն կը զգուշանան իբրև անարգական բան մը . ստիկա գերիներուն ու աղայոց վայելուչ պատիժ կը սեպեն, ու մեծ նուա-

տութիւն կը համարին մտրու : Թէ որ մէկը աս կերպովս ծեծվելու ըլլայ, շատ մեծ տոյժ և տուգանք կը նայ պահանջել միւսէն : Ընկց օրէնքը կը հիմաւայէ՞ թէ երկու անձինք կուխի մէջ միայն թուրով կամ հրացանով կրնան ծեծել զիրար . մէկ մարդ մը աս կերպովս ծեծվելով չի զգար թէ ինքը անարգութիւն մը կը արած է : Ըս կերպը կուխի մը մէջ որ թուր գործածվեցաւ թէ որ դատը դատաստանի բերվի, նուազ վերաւոր ված կողմին վրայ մէկալ կողմին կը արած և լեւորդ վնասին բաւական հատուցում ըլլալու տոյժ մը կը գրվի : Թէ որ մէկը հանդարտ կեցող անձի մը վրայ յարձակի՞ ու վերաւորէ գանիկա, քանի մը հոգի միջնորդ կը լան, ու պիտո առաջ վերաւորված անձը կը համոզեն որ միաբանի ամբի մը չափ կամ աւելի ևս իրարու դէմ ղէնք վերցունելէն դադարիլ . և աս միջոցիս երկու կողմին ալ հանդարտ կը մնայ : Ըս սահմանեալ ժամանակիս լրանալուն միջնորդները քննութիւն ընելով մէկ տոյժ մը կը վճարեն ինչպէս ըսենք թէ 2000 դահեկան, որ վերաւորված անձը վնասողէն պիտի ընդունի իր կրած վնասին փոխարէն : Ըսիկա կը ըզունի մարդը ան պայմանով՝ որ իրենց մէկը առաջ պատանդ մնայ իր քովը : Բայց հիմայ բարեկամներուն մէկը ու մէկալը կուզայ ու կազաչէ իրեն որ իր սիրոյն համար աս գումարին մէկ մասը իջեցունէ : Ըս կերպովս յանցաւորին վճարելու տոյժը գուցէ 200 դահեկանի կիջնայ : Հիմայ երկու կողմերն ալ մէկտեղ կը բերվին, ու վնասած անձը գուցէ հարիւր դահեկան ալ կը բաշխէ վերաւորողին : Ըս ասանկ ինքը իրօք հարիւր դահեկանէն աւելի չընդունիր . ու թէ որ հաշտութիւնը անխարդախ ըլլայ, հաւանականագոյն է թէ անիկա ալ բաշխէ մարդը :

Թէ որ ասանկ կուխներու մէջ կամ ուրիշ կերպով մէկը սպաննրվի, անոր խիստ մօտ մէկ ազգականին իրաւունքը ու պարտաւորութիւնն է ան սպաննորը կամ անոր մէկ խիստ մօտ ազգականը սպաննել՝ ուր որ գտնրվի ան : Ըսիկա Երբայեցուց ազգին նախնի արիւնի վրէժխնդրութիւնն է՝ որն որ անանկ հաստատ տպաւորված էր մէջերնին, որ նաև Սովսէս՝ Ըստուածային հող-

Ի/իր . ոսիս :

նով լցեալ օրինադիրը չի կամեցաւ ուղղալ կէ լուծանել անիկա : Հասար չափաւորեց ու նուաճեց անոր զօրութիւնը՝ ապաստանի քանդանքեր հաստատելով : որոնք գեղեցիկ օրինակներ էին Յիսուս Վրիստոս մեր Տէրջը՝ որ է քաղաք ապաստանի հաւատացեալ մեղաւորներուն : Արեւ. Կ. 13 : (Ժողով. Լ. 9 : Բ. 1) : Վ. 4 : Յ. 1 :

Պետուհիներուն աւագակուծեան մէջ բանեցուցած սովորութիւններուն վրայով քանի մը բան ալ պատմելով աւ գլուխը վերջացունենք :


Թէ որ Արատ մը աւագակուծեան ելլալու միտք ունի՝ տասը կամ տասներկու հոգի կառնէ իր հետը : ու ամէն ալ մուրացկանի կերպարանք կը մտնան՝ որ եթէ բռնըվին նէ դիւրութեամբ չի ճանչցըվին : ու իրենց աւերելոյթ աղքատութեանը համեմատ սոյժ մը հատուցանելով ազատին : Բայց իրենց հնարած աւ խորամանկութիւնը անանկ հինցած է՝ որ միայն երբեմն իրենց օգտին կը ծառայէ ան : Բմէն մէկը քիչ մը ալուր՝ քիչ մը աղ՝ ու կաշիէ պզտի ջուրի աման մը կառնէ իր հետը : ու ասանկ թեթեւ պաշարով մը շատ անգամ ութը օրվան ճամբայ կերթան իրենց բնակած տեղերէն : Արբոր իրիկվան դէմ իրենց կողոպտելու վրաններուն հասնին : մէջերնուն խիստ քաջախիտներէն իրեքը գիշերով անոնց մէջը կը խրկեն : ու մէկալները քիչ մը հեռուն անոնց ետ դառնալուն կը սպասեն : Բս իրեքը գլխաւոր գործ տեսնողներուն իւրաքանչեւըը յատուկ պաշտօն մը ունի կատարելու : Կէկը՝ որ կը կոչվի Սմալակ : կողոպտելու վրանին ետեւ կողմը կանցնի : ու կը ջանայ որ գիշերապահ շուները դրդուէ : Արբոր ասիկա յաջողէ՝ ու շուները իր վրան յարձակին : ինքը կըսկըսի փախցիլ՝ ու շուները զինքը հալածելով շատ մը կը հեռանան վրանէն : Բսանկ վրանը աւանց պաշտպանողի մնալով : ան իրեք գողերուն մէկ ուրիշը՝ որ Սմալակ կը կոչվի : ուղտերուն քովը կերթայ : ու ոտքերնուն չուան ներք կը տրտելով նստած տեղերնուն կը կայնեցունէ զանոնք : և գիտենք որ չի բեռնաւորած ուղտը միշտ աւանց ձայն մը հանելու ոտքի վրայ կը լայ ու կը պըտըտի : Իմայ Սմալակ է գ ուղտերուն մէկը վրան ներուն մէջէն դուրս կը բաշէ : ու մէկալ

ները միշտ իրենցմէ անոր Կտեէն կը կթան : Բս միջոցիս երբորդ աւագակը որ կը կոչվի Քայտէ : ձեռքը քիւ մը բռնած վրանին դուռը կը կայնի : որ մէկը դուրս ելլայ նէ խկոյն զարնէ վար ձգէ : Սմալակ ուղտերը ճամբայ հանածին պէս՝ մէկալն ալ անոր հետը կերթայ կը միանայ իրենց որսը առնել տանելու : Արբոր քիչ մը կը հեռանան վրանէն՝ երկուքն ալ մէյակը զօրաւոր ուղտի պոչը կը բռնեն ու բոլոր զօրութեամբ կը քաշեն անիկա : Բսից կը պատճառի որ ուղտերը կը սկըսին վազելու՝ ու մարդիկը իրենց ետեւէն կը քաշեն : և միւս ուղտերը ևս անոնց պէս՝ հետեւին վազելու կը լան՝ մինչև որ երթան հասնին ան տեղը՝ ու որ մէկալները կը սպասեն : հոն ուղտերը իրենց ընկերներուն քովը ձգելով կը փութան Սմալակն շուներուն ձեռքէն ազատելու : Բս կերպովս երբեմն մինչև յիսուն ուղտ կը գողնան աւանց շունը մը հանելու ու շիթութիւն մը պատճառելու : Բնկէ ետեւ աւագակները գիշեր ցորեկ արագընթաց ճամբորդութիւն մը ընելով իրենց տեղը կը հասնին : ու բրած աւարնին մէջը նին բաժնէ ընուն աւագակապետը ու իրեք գլխաւոր գործ տեսնողները մէյակ աւերորդ բաժին կընդունին :

Աս յանդգնական ձեռնարկութեան մէջ երբեմն կը պատահի որ աւագակներուն մէկը կամ մէկ քանին կը բռնըվին : և անտուներ իրենց գործածած կանոններուն նայելով՝ կընանք իմանալ թէ ի՞նչ նշանաւոր հիւրասիրութիւն մը ունին : Կանք որ անյիշատակ ժամանակէ սովորութիւն եղած է անապատին մէջ որ ուրիշ մը ձեռքը իյնող մէկը թէ որ կընայ դաչել երբորդ անձի մը՝ կամ անոր ձեռքի մէկ բանին՝ կամ ի՞նչ և իցէ բանի մը որ անոր հետ հպաւորութիւն ունի : կամ մինչև անգամ թէ որ կընայ անոր վրան թուքնել կամ քար մը նետել աւ խօսքս զրուցելով : « Բու պաշտպանութեանդ տակ կըն Կեմ » : ան անձը պարտաւոր է ամէն կերպով պաշտպանութիւն ընել անոր : ու ան անձին միջնորդութիւն ընելուն համար՝ ով որ ըլլայ ան : գողը բռնողը կը պարտաւորի ազատութիւն տալ անոր : Կալանաւորը կամ բռնըված աւագակը միշտ բնակաւոր անապատութիւն կը մնորուէ մէկէ մը ան պաշտպանութիւնը գտնալ : ու զինքը

բունդն ալ նմանապէս կրգգուշանայ աս պատեհութեանն անիկա զըկել : Ալ Տիմայ նայինք թէ ո՛ւր կրվերջանայ բանը : Այլա նաևորը թէ որ խօսքով չի համոզվի՝ ծեծով կրստիպվի աս պաշտպանութիւնը պահանջելու իր ունեցած իրաւունքէն հրաժարել . բայց աս հրաժարումը միայն մէկ օր մը զօրութիւն ունի : և ան պատճառովը իր կալանաւորութեան ատենը ամէն օր կրպարտուաւորեն զինքը որ իր բանտարգրված վրանին մէջը մտնողներուն ամէն մէկին զրուցէ թէ իրմէն պաշտպանութիւն չի խնդրեր ան օրը : Անիկա կալանաւոր պահելուն պատճառը ան է՝ որ որչափ կարելի է նէ էվելի զնով մը ազատութիւն տրվի իրեն : Աս վախճանիս համար՝ ինչպէս նաև իր զգուշութեամբ պահպանվելուն ու պաշտպանութիւն խնդրելու պատեհութիւններէն արդիվամ մնալուն համար , երբեմն վրանին մէջը երկու ոտնաչափ խորութեամբ գերեզմանի պէս փոս մը կրփորվի , որուն մէջը կրպառկեցունեն զինքը ոտքերը շղթաներով գետնը պնդած՝ ձեռքերը կապած՝ ու մազերը գլխուն երկու կողմէն ցիցերու փաթթած : Աս փոսին վրայ գերաններ կըշարեն՝ որոնց վրայ կըդիզեն ամէն կերպ ծանր ապրանքները , միայն պզտի ծակ մը ձգելով աւազակին երեսին վրայովը : Չի մտնելու չափ միայն կերակուր կուտան իրեն : Թէ որ հարուստ ցեղէ ըլլայ մարդը՝ այնչափ կըդիմանայ իր անունը ծածուկ պահելու ու զինքը աղքատ ցուցնելու , որ երբեմն աս կերպովս մինչև վեց ամիս բանտարգետալ կըմնայ . անկէ ետև զինքը բանտարգողը ալ կըծանձրանայ , ու քիչ մը բանով կարճրկէ զինքը որ երթայ : Բայց սակայն հաղիւ կըլլայ որ բունրված աւազակի մը կալանաւորութիւնը այսչափ երկարի : Աս քիչ մը բանով կամ մինչև անգամ բան մալ չի վճարելով ազատութիւն կրստանայ՝ թէ որ բանտարգրված մնալովը իր կեանքը վնասած երևայ . քանզի թէ որ մարդը կապված տեղը մտնելու ըլլայ , իր արիւնը զինքը բանտարգողին վրայ ըլլալ կըսեպվի : Արբեմն ալ եղած փոսին մէջէն զինքը հանելու հնարը կըգտնայ մարդը ու մերձաւոր վրանի մը մէջը կըփախչի , որուն տէրոջմէն պաշտպանութիւն կըխնդրէ : Արլայ ալ որ աս պատեհութիւնս ձեռք ձգէ՝ թուքնելով իր

ծակէն մէկու մը վրայ , որուն պաշտպանութիւնը մերժած չէ . կամ թէ որ տղայ մը պատահմամբ պատու մը հաց տայ իրեն , ալ ինքը անիկա իրեն պաշտպանը ընելու իրաւունք ստացած կըսեպվի՝ անոր հետը հաց կերած ըլլալով : Արբեմն իր ո՛վ ըլլալը կրմայվի՝ ու բոլոր իր արջաւները ու շարժական բաները իր անձին ազատչէք տալու կըպարտաւորի : Իր ընկերները ոչուով չափ կաշխատին անոր ազատութեանը համար՝ թէ ուժով և թէ բազմապատիկ ճարտարարուեստ հնարքով , որոնց մէջը շատ վարպետ են Պետուխները : Բունրված աւազակը իր արդիվամ փոսին մէջէն ազատելու մէկ խիստ սովորական եղանակն ալ ան է՝ որ իր մերձաւորներէն մէկը՝ հասարակօրէն իր մայրը կամ քոյրը կըլլայ կերթայ ան վրաններուն մէջը ուր որ մարդը պահված է , ու Պետուխներուն սովորական հիւրասիրութեամբը վրանի մը մէջը կընդունվի իբրև օտար հիւր մը : Անկէ ետև իր ազգականը ո՛ր վրանին մէջը բանտարգրված ըլլալը ստուգելով՝ մէկ կերպով մը զիշերը նայն վրանը կերթայ կըմընայ ձեռքը բամպակի կծիկ մը բռնած . ու աւազակին պահված փոսը զոտնալով բամպակին ծարը անոր բերանը կըդնէ կամ ոտքին կըկապէ , ու անկից դուրս կըլլայ , և քանի որ երթայ կծիկը կարճրկէ : Ասանկ մօտ եղած վրաններուն մէկը կերթայ , ու անոր տէրը արթնցունելով բամպակին թելը անոր կուրծքին վրայ կըդնէ , ու կըսէ . « ինձի նայէ , Աստուծոյ սիրոյն և քու անձիդ սիրոյն համար , ասիկա քու պաշտպանութեանդ տակն է » : Անտոն Արասը կըպարտաւորի ելլալ , ու բամպակին թելը ձեռքը բռնելով անոր ընթացքովը կերթայ ան վրանը կըմտնայ ուր որ հասնի՝ պահված է : Արանին տէրը կարթնցունէ՝ ու բամպակին թելը անոր ցուցնելով կըմայցունէ թէ ինքը բանտարգետին պաշտպանը եղած է : Կողը պահողն ալ կըպարտաւորի իսկ և իսկ հաճութիւն ցուցնել : Անտոնը անոր շղթաները կըբակվին , մազերուն կապերը դանակով կըկտրվին , իր գերեզմանին մէջէն դուրս կըբաշվի , ու իբրև նոր եկած հիւր մը օտարասիրութիւն ընդունելով ան անձէն որ քիչ մը առաջ անոր իշխանութեանը տակ շղթաներու մէջ կապված բանտարգրված էր , թոյլ տրուութիւն կառնէ ազատ համարձակ ելլալ երթալու :



Փեքինի Հիւսիսային դռանը :

Չինաստանի յաղապետութիւնն իմաստ : Թիւ. 2 :

Փեքին քաղաքը իր գլխաւոր երկայթիւնէրովը քիչ կըտարբերի ան ստորագրութենէն՝ որն որ Մարգո Փօլոյէն աննելով մեր ընթերցողներուն տըւինք : Իր ձևը՝ որ առաջ կատարեալ քառակուսի էր, երկան քառանկիւնի է հիմայ . ու քաղաքը միայն տասներկու քառանկիւնի մըն տեղ բռնած է : Իր արուարձանները որ Ա կենտիկցի ճամբորդին ատենը շատ ընդարձակ էին, կըթուի թէ աս երկու վերջին դարերուս մէջ հետզհետէ նուազած են :

Բուն իսկ քաղաքը երկուքի բաժնըված է հիմայ . մէկը Չինացոց ու մէկալը Թաթարներուն քաղաքը : Բաց ՚ի իր պարիսպին երկայնութենէն՝ որ երսուն ոտք բարձրութիւն ու քսան ոտք թանձրութիւն ունի, և բաց ՚ի աս պարիսպին վրայի բաղմամբ աշտարակներէն ու անոր հոյակապ դռնէ-

րէն, Փեքինին արտաքին երկայթիւն էվէլըք սմբած ու անախորժ է : Բաղաքին մէջը չի կան աշտարակներ՝ բուրգեր՝ գմբէթներ՝ կոթողներ՝ կամ ուրիշ շէնքերէն բարձր մեծ հասարակաց շինուածքներ . մինչև անգամ ծխնելոյզ մը չի կայ որ տանիսներուն հաւասարութիւնը աւրէ, որոնք գրեթէ միօրինակ բարձրութիւն ունենալուն՝ ու փողոցներուն բոլորը ուղղագիծ շինված ըլլալուն՝ դուրսէն մէկ ընդարձակ բանակի մը կամ վրաններու ժողովի մը երկայթիւն կընծային քաղաքին, որն որ գրեթէ կատարեալ պիտի ըլլար թէ որ տանիսները կարմիր կապուտ և ուրիշ ներկերով ներկըված ըլլալուն տեղը ճերմակ ըլլային : Մինչև անգամ աս մայրաքաղաքիս մէջը շատ քիչ տուներ կան որ մէկ յարկէն էվէլի բարձր ըլլան : Բաղաքը դաշտի մը վրայ շինված

Չիննելոյզ . Բե-Է-Է-Է-Է : Ա ըսան . չափը :

է՛ իր բողոքովքը (Թաթարխատանի լեռներու վը զարդարված , որոնց հեռաւոր տեսարանը շատ հիանալի ու զուարճալի է :

Քարաքին պարխապէն ներս մտնալնուս առաջ չի պարտինք մոռնալ յիշելու թէ փէքինի մօտենալու ճամբան յատակված է գեղեցիկ կիճ քարերով , որոնք վեց ոտքէն մինչև տասնըվեց ոտք երկայնութիւն ու նին , և նոյն համեմատութեամբը լայնութիւն . և սա մեծահատոր քարերուն բոլորն ալ պարտին զոնէ վաթսուն մղոն ակղէ եկած ըլլալ . քանզի սա կիճերը գրտնրված լեռները Չինաստանը (Թաթարխատանէն բաժնող լեռներն են՝ ու անոնց խիստ մօտերը այսչափ հեռաւորութիւն ունին :

Ենթամ մը զոներէն ներս մտնալէն ետքը՝ որոնք երկերկու հատ են : փէքին կըցուցը նէ նոր՝ զարմանալի՝ ու ներգործող երևոյթ մը : Երկու շնտակ փողոցներ չորս Ենգղեական մղոն երկայնութեամբ ու 120 ոտք լայնութեամբ զուգահեռական գծիւ կընթանան հարաւային կողմի երկու զոներէն հիւսիսային երկու զոներուն . ու ասոնցմէ երկու ուրիշ փողոցներ ուղղանկիւն կանցնին նոյն մեծաշուք լայնութեամբը : Ես գլխաւոր փողոցներուն մէկը մտնալուն՝ ճանապարհորդը իր առջևը երկու կարգ գեղեցիկ խանութներ ու վաճառատուներ կըտեսնայ , որոնց վաճառքները զուրք բաց զբված են՝ ինտոր որ նշանակեցինք , ու իրենց գեղեցիկ նշանատախտակները վրանին կախված է՝ ոչ միայն սպրանքներուն ընտելներ ու վաճառողին անխարդախութիւնը ցուցնող ներկած ու ոսկեզօծած նկարազրութիւններով զարդարված , հասար նաև ընդհանրապէս մետաքսեղէն ժապուէններով փաթութած ու ամէն գոյն դրօշակներ վերէն՝ ի վար կախված , մեծահանդէս տօնի մը պատերազմական նաւի կայմին զարդարանքին պէս , բայց անկից ալ գեղեցիկ : Տուներուն ճակատները ու կողմերն ալ հաղիւ թէ ասոնցմէ պակաս շքեղութիւն ունին , ընդհանրապէս բաց զունով մը ներկած ու ոսկեզօծ զարդերով խաւեած ըլլալնուն : Սէր կարծիքներուն ու սովորութեանցը հակառակ տեսնրվելու համար զբված ծախու նիւթերուն

մէջ ամենէն մեծ երևոյթ ընծայող մեռելներու դադաղներն են : Ես փողոցներուն մէջը օտարականը բոլոր օրը խուան բաղմութիւն մը կըտեսնայ՝ որ հազիւ թէ կըմիջահատի : Ես բաղմութիւնը մէյմը միջին ու երկու ալ կողմնական ճամբաներ ունի : Սիջին ճամբայէն կերթան արքայական նախարարները ու մեծամեծները ձիով կամ պատգարակով՝ իրենց բաղմութիւ սպասաւորներովը , որոնք հովանոցնին՝ դրօշակնին՝ ներկած լապտերնին՝ և իրենց աստիճանին ուրիշ նշանները կըկրեն : Եոյն ճամբայէն կերթան նաև թաթար գնուորները՝ ձիերնին քշելով , կամ իրենց դաւազաններովը ամբոխին մէջէն ճամբանին բանալով . զարձեւալ (Թաթարխատանէն ածուխ բերող ուղտերը , զանազան կողմերէ խաւարտ բերող կառքերը ու սայլերը , տիկիմները մեծածախ պատգարակածև ամբոններու վրայ՝ որ շատ կըգործածվին , հարսանեաց ու թարման հանդէսները՝ որոնց մէկին կառքերը ու մէկալին դադաղները ոսկեզօծած ու վրանին մետաքսեղէն հովանիներով ծածկած է , ու բոլոր սն մշտաշարժ տեսարանին ամենէն երեւելի մասը յուզարկաւորութեան հանդէսն է :

Երկու կողմի ճամբաները լեցուն են տոնցմով՝ որոնք գնելու ծախելու ու փոխանակութիւն ընելու զբաղած են . Չինաստանցոց ընդհանուր բնաւորութենէն յուսացվելու կարելի եղածէն էվել է ան տեղը տիրապետած շքեղութիւնը՝ շունչը ու շփութութիւնը . բան ծախողը իր ունեցածը կըկանչէ , ծախու առնողը բարձրաձայն կըբարկանայ ու կըկուռի , սափրիչը իր մագխիլը օղին մէջը շողացունելով ու իրարու զարնելով ձայն կըհանէ ու սափրիչ ուզողները կըհրաւիրէ . զերասանները ու առակախօսները՝ շարակրատ բժիշկները ու երաժիշտները՝ փերսզակները ու իրենց չնչին վաճառքները՝ կախարդները՝ գուշակութիւն և հմայութիւն ընողները փողոցին երկու կողմը պարապ տեղ չեն թողուր : Եւ սա ազարակը աղմուկը և ամբոխը մէկ մասնաւոր եղանակի մը կամ զխաւածի մը յատուկ չէ , հասար բոլոր տարիին մէջ ամէն օր կըթաղաւորէ : « Շաբաթը երկու անգամ կամ

կիճ . Բերեր : Դասպուէն . շէքեր : Պատգարակ . Բեճիլերէ : Խաւարտ . դադաղներ :

էվելը՝ քաղաքին դուռներէն կանցնէի” կը սէ Պարրօ (Barrow) ճամբորդը , « ու հաղել թէ կը պատահէր որ խել մը տոնէ չըս պատէի մինչև որ անցք մը բացվէր՝ և մա նաւանդ առտունները , թէպէտև երկու կամ իրեք զննուոր իրենց գաւազաններովը կը ջանային ճամբայ բանալը” : Ըս խաւ նիճադանջ բազմութեանս մէջ կանանց թիւը ամենեւին չի համեմատիր երիկ մարդոց : Չինացիք իրենց կնիկները էվելը գգուշու թեամբ տունը կարգիլէն մայրաքաղաքին մէջը քան թէ ուրիշ տեղ . և թէպէտ սակաւամարդ ու նեղ փողոցներուն մէջը ելլելէն կրտսնըվի թէ՛ աղջիկները (որոնք երիկ մարդ մը մտնեալուն միշտ ներս կը բաշվին) իրենց տանը դուռը կայնամ ծըխ պամորջնին կը քաշեն , բայց թաթարներէն ՚ի զատ շատ քիչ կնիկ մարդ կրտսնըվի թէ բազմութեան մէջը և թէ նեղ փողոցներուն մէջ : Բայց թաթար կնիկները ամէն տեղ կը պլարաբին թէ քալելով և թէ ձիով : Խիստ բազմամտոն ժողովրդոց մէջը կրտես նրվին մետաքսեղէն պատմուճան մը վրանին աւաճ՝ որ մինչև ոտքերնին կը հասնի , որոնք որ Չինացի կանանց չափազանց փոքրիկ ոտքերուն : ովը չափազանց մեծ ըլլալ կերևան :

Ընդարձակ լայնութիւնը ու տնընդ միջահատ ամբոխը միշտ չորս մեծ ու գըլ խաւոր փողոցներուն մէջն են : Բոլոր ուրիշները միայն նեղ փողոցի եր են մեծ ճամբաներուն ճիւղերը՝ ուղղ անկիւնի ձեով ձգված , ու շատ աւանձին և լուիկ են : Բայց և այսպէս տերութեան նախարարնե ղուն ու հարուստ և մեծ մարդոց շատերուն տունները աս նեղ փողոցներուն մէջն են : Լորտ Մաքարդնի (Lord Macartney) Ընդ զիացի դեսպանը ու իր ընկերները քաղաքին պարխալին մտերը նեղ փողոցի մը մէջ աս տեսակ տուն մը կը բնակէին՝ որ Վան թօնցի մէկը շիներ էր գրեթէ 100,000 լիբէ Սթեռլին ծախելով անոր վրայ : Ըս փողոց ներուն անշքութիւնը էվելցունողը ան է՝ որ բայ ՚ի պղտի դունէ մը տուններուն ճակատը պատուհաններ կամ լուսամուտներ չի կան : Ըսանկ բաները միայն մեծ խանութները ու շահմարանները կունենան , որոնց ամէնը չորս գլխաւոր փողոցներուն մէջն են : Սա

կայն հարուստներուն կարգէն շատերուն տունը տանիսի պէս ճեմելիք մը ունի ճա կատը ցած պատով մը որ թաղարներու մէջ մանր ծառերով բոյսերով ու ծաղիկ ներով զարդարված է , ու զուարճալի տեսարան մը կը գործէ :

Մէջ լայն փողոցները յատակված են ու ոչ նեղերը , բայց բոլորն ալ ամէն առտու կը մաքրվին , ու առջնները կանոնաւորա պէս կը ջուլին փոշին իջեցունելու համար , որ շատ անգամ խիստ անտանելի է :

Ըմէն ո՛վ որ աս նշանաւոր քաղաքը մը տած է՝ կը հաստատէ թէ քաղաքական պահ պանութիւնը շատ զգուշութեամբ ՚ի գործ կը դրվի հոն : Իւրաքանչիւր փողոցի երկու ծարը փատէ դռներ կան՝ որ գիշերները կը զոյգվին ու կարգիլեն ան փողոցին բնակիչ ները քաղաքին մնացածներուն հետ հա ղորդակցութիւն ընելու . ոչ ալ ան տեղի պահապանները ել ու մուտ ընել կուտան մէկու մը որ իր ձեռքը լապտեր չունի , ու հարկաւոր գործ ունենալը չի ցուցնէր : Վիշերապահերը ևս անգաղար դուռնէ ՚ի դուռ կը պլարաբին , ու իրենց արթնութիւնը ցուցնելու համար ամէն երկու կամ իրեք րոպէի ձեռքերնին բռնած պամուռէ խողովակի մը դաւազանով կը զարնեն , որ ծանր՝ խորունկ՝ ու բարձր ձայն մը կուտայ : Եւ թէպէտ ասիկա բաւական է բնակիչնե ղուն ապահովութիւնը ու խաղաղութիւնը կատարեալ պահէլ , բայց ասիկէց ՚ի զատ՝ քաղաքին մէջը ամէն տաճարական տունի մէ կին տէրօջը կամ բնակիչին կարգաւ յանձ նրված է իր ինը դրացիներուն խաղաղութիւնը պահէլ , և անոնց կանոնաւոր վար մունքին համար երաշխաւոր ըլլալ : Թէ որ կուի մը պատահելու ըլլայ , պարտաւոր է խեղճ իմացընել խիստ մօտ դռնըված պահանջներուն տանը : Ըս կարգադրութիւնները Չինաստանի մնացեալ քաղաք ներուն ալ հասարակ են :

Փէքին ինտոր որ յիշեցինք՝ երկուքի բաժնըված է . թաթարները քաղաքին հիւսիսային կողմը կը բնակին , ու Չինացիք հարաւային կողմը : Վարտին ծարը կամ ան որ կը կոչվի « Կայսերական Վարդաք » ,

Վիշերապահ . Կէ՛՛է պէ՛՛՛՛ի :

որուն մէջն են ինքնակալին պալատը ու պարտէզները , ամէն դատաստանարանները ու կառավարութեան զործքերուն տուները , նախարարներուն՝ ներքինիներուն ու պալատին վերաբերեալ վաճառականներուն ու արհեստաւորներուն կենալու տեղերը , միոն մը երկան ու միոնի մը չորս մասին իրեք մասը լայն քառանկիւնի տեղ մը կը բռնէ , ու քսան տոք բարձրութեամբ պատով մը շքր ջապատած է : Կերտի կողմը շատ զուարճալի է , ու պզտի գետ մը՝ որ պըտըտելով անոր մէջէն կանցնի , ոչ միայն առատ ջուրով մը կողնէ անոր , հապա մեծապէս կէ վեղցունէ գետիններուն գեղեցկութիւնը , ջրանցքներու՝ լիճերու՝ և աւազաններու ձեւացուցած ըլլալով , որ արուեստաշէն լեւներուն՝ վէմերուն՝ ու անտաւներուն հետ մէկ տեղ բուն իսկ բնութեան շքեղ նմանութիւնը կը ցուցնէ :

Չինաստանացոց տէրութեանը մայրաքաղաքին վրայով շատ քիչ ծանօթութիւններ մնացին ընելու : Իր յորդաւատ բազմամարդութիւնը 3,000,000 հոգի ըլլալ հաստատ ված է , բայց չի հաւտացվիր : Պարբո՞ որ շատ միջոցներ ունեցաւ հետազօտելու , և որ միշտ բանը եղածէն պակաս կը ցուցնէ քան թէ էվելի , վստահութեամբ կրկոչէ աշիկա հողագունտիս վրայի քաղաքներուն ամենէն մեծը : (Օտարականի մը ցուցուցած իր երևոյթը մեծ ու երեւելի և գեղեցիկ է , բայց գլխաւորապէս հարկաւոր եղած դիւրութիւններէն ու պատահութիւններէն բողբոջին զուրկ է : Իր փողոցները ոչ յատակված են ու ոչ ջուրի անցք ունին , ոչ ալ պէտք եղած անուշ ջուրը բաւական ունի . վասն որոյ ձմեռը ցեխտտ է ու ամառը փոշալից : Եւ մէն տեսակ աղտեղութիւններէ ելած զղուելի հոտերովը լեցուն է , որն որ հարուստները տուներնին ազդու հոտերով զանազան ծխանելիքներ ու բազալութիւններ ձխելով կը ջանան ոչնչացունել . ու բնակիչները պարտաւոր են հորի ջուր գործածել , որ զղուելի է : Թէ որ փէքնի շքեղութիւնը տասնապատիկ էվելի ըլլար իր եղածէն , սա պակտութիւններուն ստացմանը համար զո՞ ընելու էր անիկա : Են բարձրաբերձ զուռը ու ոսկեղոծ պալատը ,

ան թաղաւորական պարտէզը ու զարդարուն լիճը իր միլիօնաւոր բնակչացը հանգստութիւն ու աւողջութիւն ընծայող բաներուն հետը չեն կրնար բաղդատվիլ :

Յահանէս Պլենիտէն Լըրոբրէ Էրազ : Թի- . 2 :

Ինչո՞ք երազիս մէջը տեսայ որ ծերունիս սա պատմութիւնը ինձի ընելուն՝ ինքը անով մեծապէս զգացած կերեար : Ու դարձեալ առաջ տանելով իր խօսքը՝ ըսաւ . Ըսանի՞ Քրիստինէ իր աղաքը կանչեց , ու սա կերպովս սկսեց խօսիլ անոնց . « Իմ աղաքս , ես սա օրերս մեծ մտատանջութեան մէջ ինկայ ձեր հօրը մահուանը վրայօք՝ ինտոր որ դուք ալ կիմանաք , թէ պէտե անոր երջանիկ ըլլալուն վրայով բնաւ տարակոյս մը չունիմ . ինչու որ ես հիմայ կը հաւատամ թէ ինքը բարի վիճակի մէջ է : Ըսկից ՚ի զատ մեծապէս տակնուվրայ եղած եմ՝ մտածելով իմ վիճակս ու ձերինը , որ ճշմարտապէս կը հաւատամ թէ բնութեամբ թշուառ վիճակ մըն է ան : Կաւ ձեր հօրը ներութեանը մէջ անոր հետ իմ կենցաղավարութիւնս խղճմտանքիս ծանր բեռ մըն է . ինչու որ ես իմ սիրտս ալ խստացուցի անոր դէմ ու ձերն ալ , ու մերժեցի իր հետը ճամբորդութեան երթալը :

Աս բաներուն մտմբուքը վաղվաղակի պիտի մեռցունէր զիս հիմայ՝ թէ որ երէկ զիշերվան տեսած երտղս ու սա հիւրին սա աւաղվան ինձի տըրած քաջալերութիւնը չըլլային : Այկէք՝ զակերներս , ժողվըովինք ու երթանք ան դուռը՝ որ երկնային քաղաքը կը տանի , որպէս զի կարենանք տեսնալ ձեր հայրը , ու խաղաղութեամբ իր հետը ու իր ընկերներուն հետը բնակինք ան երկրին օրէնքներուն պէս » :

Անտոն իր զակերներուն ու շքերէն արցունքները սկսեցին վազել իրենց ուրախութեանէն՝ որ իրենց մօրը սիրտը հակամտած էր սա բանս ընելու : Աւտի իրենց հիւրը հրաժարական ողջոյնը տալով գնաց , ու իրենք սկսեցին ճամբայ ելլալու պատրաստըվիլ :

Բայց անոնք երթալու համար ատանկ զբաղած ըլլալուն՝ Քրիստինէին զրային ներէն երկու կնիկ եկան իր տունը ու զուռը

Հետազօտել . Լեֆօրէշ Էլֆէր : Յելս . շախո :

զարկին : Վրիստինէ առաջին ըսածին պէս ըսաւ անոնց . թէ որ Լատուծոյ անուանովը կուգաքկոր , մտի՛ք ներս : Անիկները սա խօսքին վրայ ասլաճ մնացին . ինչու որ սա կերպը խօսք լաճ չէին , ու Վրիստինէին բերնէն ելլալ չէին կարծեր : Ի՞նչ և իցէ ներս մտան , բայց ահա դտան որ անիկա իր տունէն երթալու կը պատրաստը վերկոր :

Ուստի սկսեցին խօսիլ ու ըսել . զըրա ցի , կաղաչէնք ի՞նչ մտք ունիս որ կը ժող վըտովսկոր :

Վրիստինէ պատասխան տըլաւ ու ըսաւ անոնց մեծին՝ որուն անուն էր Լըկչոտ Տըկին . Ճամբորդութեան երթալու կը պատրաստը վիմկոր :

Աս Լըկչոտը անոր աղջիկն էր՝ որ Գըժ ուարութեան Բլըւրին վրայ Վրիստիանու սին դէմը ելաւ , ու առիւծներուն վախին համար անիկա յորդորեց ետ դառնալու :

Լըկչոտ . Եղէ , ի՞նչ ճամբորդութեան :
Վրիստինէ . Իմ բարի էրկանս ետեէն երթալու : Ու սա խօսքը ըսելով լալու սկսեց :

Լըկչոտ . կը ըստամ թէ չէ՛ բարի դըս ցին . կաղաչեմ՝ քու խղճալի զաւկըներուդ սիրուն ինքըզինքդ ասանկ աննոաբար մի կորսընցուներ :

Վրիստինէ . Ի՞նչ կըսես , զաւկըներս ալ հետս պիտի երթան . մէկը չուզերկոր ետ մնալ :

Լըկչոտ . Օարմանքը պաշարած է զիս թէ ի՞նչ բան կամ ո՞վ առաջնորդեց քեզի սա միտքը ընելու :

Վրիստինէ . Ո՛հ , զըրացինս , թէ որ իմ զգացածիս չափ դուն ալ զգայիր , չեմ տարակուսիր որ դուն ալ իմ հետս պիտի երթայիր :

Լըկչոտ . Ի՛հ , ի՞նչ նոր դիտութիւն ըս տացար դուն , որ ասանկ քու միտքդ քու բարեկամներէդ կը դարձունէ , ու քեզի կը թելադրէ երթալ մարդ չի գիտեր թէ ս՛ր :

Վրիստինէ . Պատասխան տըլաւ Վրիստինէ . իմ էրկանս ինձմէ զտովելէն՝ բայց մանաւանդ անոր դետը անցնելէն հետէ մեծապէս վըտացած եմ ես : Բայց ա՛նէն ալ Լեւի ինձի նեղութիւն տըլողը իմ խիստ վարմունքս է իր հետը՝ իր նեղութեանը ատենը : Եսկից ՚ի զատ ինքը ինտոր որ էր

նէ անտոներ՝ ես ալ հիմայ անանկ եմ . բան մը իմ սիրտս չի հանդարտեցուներ՝ բայց միայն ճամբորդութեան ելլալը : Այրէկ զի շեր երադիս մէջը տեսայ զինքը : Այնքն թէ իմ հոգիս իր հետը ըլլար : Ինքը ան երկրին թագաւորին առջը կը կենայ . իր հետը կը նըստի ու կուտէ՛ անոր սեզանը . անմահնէ ըուն հետը ընկեր եղած է . ու տուն մը տըված է իրեն բնակելու՝ որուն քովը երկընիս վրայի ամենալաւ պալատը միայն աղբանոց մը կը թըլի ինձի * : Պալատին Տէրը մարդ ալ խըկեց ինձի՝ ու խօսք կուտայ զիս ընդունելու թէ որ իրեն երթամ : Իր խըրկած պատգամաւորը հիմայ հոս էր , ու նա մակ մը բերաւ ինձի՝ որ երթալու կը հրաւիրէ զիս : Ես ըսելով քաջեց հանեց նա մակը , ու կարգաց և ըսաւ անոնց . հիմայ ի՞նչ ըսելիք ունիք ասոր :

Լըկչոտ . Ե՛ի . ինչ յիմարութիւն է որ քու էրկանդ ու քու վրայ եկաւ , դուք զձեզ ասանկ դժուարութիւններու մէջ ձգելու : Եղէկ զիտեմ որ լաճ ես՝ թէ ինչ պատասհեցաւ քու էրկանդ իր ճամբուն վրայ իր առջե քայլափոխին , ինտոր որ մեր դըրացին պարոն համառութիւնը կրնայ տակաւին վկայել , որովհետեւ ինքը անոր հետը դընաց . ու անկից ՚ի զատ պարոն-Ֆոփոխամիան ալ , մինչև որ խելացի մարդոց պէս վախցան ալ աւելի առաջ երթալու : Ասեցինք ևս կրկին և կրկին թէ ինչպէս պատասհեցաւ առիւծներուն՝ Եպողիանին՝ Մասնուն Շուքին և շատ ուրիշ բաներու : Ո՛հ ալ պէտք է քու միտքէդ ելլալ ան վտանգը՝ որուն պատասհեցաւ Ունայնութեան հօնավաճառին մէջը : Ու ինքը էրիկ մարդ ըլլալով այսչափ դժուարութիւն որ կրեց , ի՞նչ կրնաս ընել դուն՝ որ խեղճ կնիկ մըն ես : Մտածէ ևս որ սա չորս անուշ գառնուկները քու զաւկըներդ են , քու մարմնդ ու քու ոսկորներդ : Ուստի թէև քեզ կորսընցունելու չափ պիտի յանդգնիս ալ նէ , բայց գոնէ քու զաւկներուդ սիրուն եկոր քու տեղը կիցիր :

Բայց Վրիստինէ ըսաւ անոր . Մի՛ յորդորեր զիս՝ ս՛վ իմ դըրացինս . ես հիմայ իմ ձեռքս մեծ պատահութիւն մը ունիմ անով

շահելու . ու չափազանց յիմար պիտի ըլլա՞մ թէ որ սա պատեհում թիւնս 'ի գործ զընելու սիրտ չընեմ : Եւ սն ձեր ըսած նեղութիւններուն վրայով՝ որոնց կերևայ թէ պիտի պատահիմ՝ ճամբուն մէջ , անոնք այնչափ հեռու են ինձի սրտաբեկութիւն մը ըլլալէն՝ որ կըցուցընեն թէ իմ բռնած ճամբաս շտտակ է : Աեղին անուշէն առաջ պարտի գալ , ու ասիկա անուշը առաւել ևս պիտի անուշցունէ : Ա՛յն որոյ դուք որ Լստուծոյ անունովը չեկաք իմ տունս՝ ինտոր որ ըսի , կաղաչեմ որ երթաք՝ ու ալ աւելի անհոնգիստ չընէք զիս :

Անտոնի Երկչտոր կշտամբելով զանիկա՛ ըսաւ իր ընկերին . Եկոր իմ զբայիս Գթութիւն , ինքքդինքը իր կամքին ձգե՛նք , որովհետև ինքք մեր խրատը ու մեր ընկերութիւնը կանարդէկոր : Բայց Գթութիւնը կանկ առաւ , ու չէր կրնար միաբանիլ իր զբայինին ըսածին . և ասիկա երկու պատճառով . նախ որ իր սիրտը կըմորմոքէր Վրիտտինէին վրայ : Աւտի իր միտքէն կը սեր՝ թէ որ իմ զբայինս հարկաւ պիտի երթայ , քիչ մը ճամբայ իր հետը երթամ ու օգնութիւն ընեմ իրեն : Երկրորդ որ իր սիրտը կըմորմոքէր բուն իր հօգիին վրայ . ինչու որ Վրիտտինէին ըսածները քիչ մը իր միտքը յաղթեցին : Աւտի իր մտքին մէջը կըսէր զարձեալ՝ Լս Վրիտտինէին հետը եվելի բան պիտի խօսիմ ես . ու թէ որ իր ըսածին մէջը ճշմարտութիւն ու կեանք գրտնամ , բոլոր սրտովս ես ինքնս ալ իր հետը պիտի երթամ : Աւտի Գթութիւնը սկսեց այսպէս պատասխան տալ իր զբայինին Երկչտտին :

Վրիտտին . Գըբային , արդարև քու հետդ եկայ ես Վրիտտինէն տեսնալու սա աւտու . բայց որովհետև ինքք իր վերջին հրաժարական ողջոյնը կուտակոր իր երկըրն՝ ինտոր որ կըտեսնաս , կըխորհիմ որ սա պայծառ առաւուտուս քիչ մը իր հետը երթամ , ու իր ճամբուն վրայ իրեն օգնութիւն ընեմ : Սակայն իր երկրորդ պատճառը չի զըուցեց անոր , հասա անիկա իրեն պահեց :

Երկչտ . Կըտեսնամ որ դուն ալ միտք ունիս , յիմարաբար երթալու . բայց ատեն չանցուցած զըուշութիւն ըրէ , ու խելացի եղի . երբոր վտանգէն դուրս ենք՝ դուրս

ենք անկից . բայց երբոր մէջն ենք՝ մէջն ենք :

Աւտի Երկչտտ Տիկինը իր տունը դարձաւ , ու Վրիտտինէ իր ճամբորդութիւնը ընելու ելաւ : Բայց Երկչտտը իր տունը հասնելուն՝ մարդ կըխըրկէ որ իր զբայիներուն մէկ քանին կանչեն . այսինքն՝ Տիկին Չղջիկի—աչքը , Տիկին Մմիտը , Տիկին Թեթեամիտը ու Տիկին Ոչինչ—զիտցողը : Աւ երբոր անոնք իր տունը եկան՝ կը պատմէ անոնց Վրիտտինէին ու իր միտքը զրած ճամբորդութեանը վրայով . ու ասանկ կըսկըսի ընել իր պատմութիւնը :

Երկչտ . Գըբայիներ , սա աւտու շտտ ընկելք չունենալուս համար՝ Վրիտտինէն տեսնալու զացի . ու երբոր զբանը առջևը հասայ՝ զարկի անիկա , ինտոր որ գիտեք թէ մեր սովորութիւնն է : Վրիտտինէ ներսէն ձոյն տըւա՛ւ թէ որ Լստուծոյ անունովը կուգաք , մտէ՛ք ներս : Աւտի ներս մտայ՝ կարծելով թէ ամէն բան բարի է . բայց երբոր ներս գացի , գտայ որ կըպատրաստըվէրկոր քաղաքէն ելլալու , ինքն ալ՝ իր զաւկըններն ալ : Ա՛յն որոյ հարցուցի իրեն թէ ի՞նչ միտքով սա բանս կընէկոր . ու ինքը կարճ խօսքով ինձի զըուցեց՝ թէ ճամբորդութեան ելլալ է իր միտքը , ինտոր որ իր երկը ելաւ : Երբող մըն ալ տեսեր է՝ որ պատմեց ինձի , ու ըսաւ ևս թէ իր էրկանը եղած երկրին թագաւորը հոն երթալու համար հրաւիրանայ նամակ մը խրկեր է իրեն :

Անտոնը խօսեցաւ ասիկին Ոչինչ—զիտցողը ու ըսաւ . Եւ ի՞նչ , պիտի երթայ՞ մի արդեօք :

Երկչտ . Ե՛րբ , ինչ որ ըլլայ երթալու է . քանզի երբոր ես կըջանայի համողել զինքը որ եղած տեղը կենայ՝ ցուցընելով իրեն իմ մեծ սրտաճառս՝ (որ է ճամբուն վրայ իրեն պատահելու բողմութիւ նեղութիւնները ,) ինքը բուն իսկ անիկա մեծ աւիթ կընէր իրեն իր ճամբուն մէջը զինքը առաջ տանելու : Վանզի սա խօսքը զըուցեց ինձի . Աեղին անուշէն առաջ կուգայ . մանաւանդ որ անիկա անուշը առաւել ևս կանուշցունէ :

Չղջիկ—աչք . Ե՛րբ , ի՞նչ ըսեմ սա կայր ու յիմար կնկանը . իր էրկանը քաշած

նեղութիւնները խրատ չեն ըլլար իրեն .
 ես իմ կողմանէս կըտեսնամ որ եթէ ինքը
 կրկին հոս ըլլար , բարտովն գոհ սրտով
 պիտի հանդիստ կենար , ու ոչինչ բանի հա-
 մար բնաւ այնչափ վտանգներու դէմ չի պի-
 տի ելլար :

Պատասխան տրուաւ նաև Տիկին Մնմիտը
 ըսելով . թող կորսրվին քաղաքէն ասանկ
 խեղացնոր յիմարները . ես իմ կողմանէս
 կըսեմ որ աղէկ ազատեցանք իրմէն . թէ որ
 աս մտքովը իր եղած տեղը կենար , ո՞վ պի-
 տի հանդիստ մնար իր քովը . ինչու որ կամ
 տրտում պիտի մնար , կամ լուռ պիտի կե-
 նար , և կամ անանկ բաներու վրայ պիտի
 խօսէր որ խեղացի մէկը չի կըրնար տա-
 նիլ : Մնոր համար՝ ես իմ կողմանէս
 ամենեւին չեմ ցուելի իր երթալուն վը-
 ղայ . թող տուր երթայ՝ ու իր տեղը աղէ-
 կը դայ . քանի որ աս այլանդակ յիմարնե-
 րը կըկենան , աշխարհս աղէկ ըլլալիք չու-
 նի :

Ասոնցմէ ետև Թեթևամիտը սկսեց խօ-
 սիլ աս կերպով . եկէ՛ք աս կերպ խօսքե-
 րը մէկդի ձգեցէ՛ք : Արէկ ես Տիկին Ալ-
 վաշտին տանն էի , ուր որ մեծ ուրախութիւն
 ունէինք : Վանսի ո՞վ կըկարծէք թէ կար
 հոն . ես կայի՛ Տիկին Վարմասէրը՝ և իրեր
 չորս ուրիշները , Պարոն Շամբուշին՝ Տիկին
 Մղտեղութիւնին՝ ու քանի մը ուրիշներուն
 հետ . հոն ունէինք երաժշտութիւն ու կա-
 քաւ , ու հեշտութիւննիս լեցունելու համար
 բոլոր ուրիշ հարկաւոր բաները : Աւ հա-
 մարձակ կըսեմ որ Տիկին Ալվաշտուր սքան-
 չելի բարեմտունդ աղնուական կին մըն է , ու
 պարոն Շամբուշը Նոյնպէս զեղեցիկ անձն
 մը է :

Գանք որ Վրբիտինէ մինչև հիմայ
 ճամբայ ելեր էր , ու Վթութիւնը իր հետը
 դացեր էր . ու երբոր կերթային իր զու-
 կընէրն ալ հոն հետերնին ըլլալով Վրբի-
 տինէ սկսեց խօսիլ և ըսել . Վթութիւն .
 ես չէի յուսար որ դուն իմ հետս դունէն
 դուրս ոտք կոխես իմ ճամբուս մէջը քիչ
 մը ինձի ընկերանալու :

Պատասխան տրուաւ մանկամարդ Վթու-
 թիւնը՝ (որովհետև ինքը տակաւին նորահաս
 օրիորդ մըն էր) և ըսաւ . թէ որ կարծէի
 որ իմ քու հետդ երթալս օգտակար պիտի
 ըլլար , բնաւ մէյմալ չի պիտի մօտ երթայի
 քաղաքին :

Վրբիտինէ . Վթութիւն , ըսաւ Վրբի-
 տինէ , եկոր ինձի հետ ընկեր եղիւր . աղէկ
 գիտեմ թէ մեր ճամբորդութեան վախճանը
 ինչ պիտի ըլլայ . իմ երկիս ան տեղն է՝ ուր
 որ կըբաղձար ըլլալ բոլոր Սարսիական
 հանքերուն մէջն ոսկիներուն փոխարէն : Աւ
 դուն ալ չի պիտի մերժովիս , թէև միայն
 իմ հրաւիրելովս կերթաս հոն : Թագաւորը՝
 որ ինձի ու իմ զուկընէրուս համար մարդ
 խրկեց , անանկ մէկն է՝ որուն բերկրութիւ-
 նը Վթութիւն ընէրն է : Ասկից՝ ի զատ թէ
 որ կուզես նէ վարձքով կըբռնեմ քեզ , ու
 իմ հետս կերթաս որպէս թէ իմ սպասաւո-
 րըս : Աւ սակայն մէջերնիս ամէն բան հա-
 սարակ կընենք . միայն թէ կուզեմ որ հետս
 գաս :

Վրբիտինէ . Բայց ի՞նչպէս գիտնամ որ ես
 ալ պիտի ընդունվիմ : Թէ որ աս յոյսը ա-
 նանկ մէկէ մը ունենայի որ գիտէր , ամենեւին
 չի պիտի երկմտի՞ հապա պիտի երթա-
 յի , օգնութիւն դոնալով Մնկից որ կընայ
 օգնել , թէև որչափ ձանձրանալի ըլլար
 ճամբան :

Վրբիտինէ . Սիրելի Վթութիւն , քեզի
 ըսեմ ես թէ ինչ պիտի ընես : Մինչև Աեղ
 Վոււր իմ հետս եկոր , ու հոն քու վրա-
 յովդ հարցուփորձ ընեմ ես . ու թէ որ հոն
 քաջալերութիւն մը չի գտնաս , անտունը
 իմ միտքս ալ կըհաճի որ քու տեղդ դաւ-
 նաս : Ասև կըվճարեմ քեզի քու վարձքդ՝
 քու մարդասիրութեանդ փոխարէն , որ ցու-
 ցուցիր ինձի ու իմ զուկընէրուս՝ մեր ճամ-
 բուն մէջը մեզի ընկերութիւն ընելով :

Վրբիտինէ . Աւրեմն պիտի երթամ հոն՝
 ու ինչ որ հետեւի նէ անիկա պիտի ընդու-
 նիմ . ու Տէրը շնորհէ որ ան վիճակը իմայ
 ինձի հոն ինտոր որ Արկիսից Թագաւորը
 կըկամի :

Հիմայ Վրբիտինէ ուրախացաւ իր սըր-
 տին մէջը՝ ոչ միայն ընկեր մը ունենալուն
 համար , հապա որ աս խղճալի օրիորդը
 համոզեց ալ որ իր փրկութեանը վրայ սէր
 ձդէ : Այսպէս ՚ի միտսին յաւառ զացին
 անոնք , ու Վթութիւնը սկսեց լալ : Վր-
 բիտինէ ըսաւ անոր . Ինչո՞ւ համար ասանկ
 կուլաս՝ քոյր իմ :

Վրբիտինէ . Վիսոս . ո՞վ պիտի ստուգա-
 պէս մտածէ տակաւին մեր մեղանչակրան քա-

դաբին մէջը մնացած իմ ողորմելի ազգականներուս վիճակը ու չի պիտի լայ : Իւ իմ նեղութիւնս աւելի ծանրացունողը ան է՝ որ ոչ խրատիչ մը ունին , ու ոչ մէկը որ գալիքը իրենց զրուցէ :

Քրիստոսն . Ղաւթորդները բոլորովին Գութ ու գորով կրկտրին . ու դուն քու բարեկամներուդ համար կուլաս , ինտոր որ իմ բարի Քրիստոսնաս իս ձգելուն ինծի համար լացաւ՝ որ ես չի պիտի մտիկ ընէի իրեն . բայց անոր ու մեր հէրը անոր արցունքները իր ամանին մէջը ժողվեց , ու հիւմայ դուն ու ես՝ և իմ աս անուշիկ դաւկրնէրըս անոնց արդիւնքը ու պտուղը կը բաղնէք կոր : Գլթութիւն , կը յուսամ որ քու աս արցունքներդ չի պիտի կորսովին . ինչու որ ճշմարտութիւնը ըսաւ , « Կ'նոք որ արցունքով կը ցանեն , ցնծութիւնով կը հնձեն » : Եւ դարձեալ՝ « Զանելու սերմը տանելով լայլով ելող էրթողը անշուշտ ցնծութիւնով ետ պիտի դառնայ իր ցորենի խուրձերը բերելով » : Մարտ. Ժիլ . 5 , 6 :

Եւր՝ իմ ծերունի բարեկամս իր խօսքը առաջ տանելով ըսաւ , Բայց երբոր Քրիստոսնէ Յուսահատութեան Տիղմին եկաւ հասաւ , սկսեց կանկ առնել հոն . ինչու որ կըսէր՝ Եսիկա է ան տեղը ուր որ իմ սիրական էրիկս մազ մնայ ցեխով պիտի խեղդովէր : Իմացաւ ևս որ ճամբորդներուն համար աս տեղա աղէկացունելու Թագաւորին հրամանին վըայ տակաւին առջեկէն էվելի դէշ էր ան : Ես ալ ան տոներ հարցուցի անոր Թէ արդեօք ճշմարիտ է՞ մի աս . ու բարի ծերունին ըսաւ , Եյո՛ , բոլորովին ճշմարիտ է . քանզի շատերը կան որ ինքը զինքնին կը ցուցնեն Թէ Թագաւորին զոր ծաւորներն են , ու կըսեն Թէ Թագաւորին պողոտաները նորոգելու համար կաշխատին , բայց քարին տեղը տիղմ ու աղը կը բերեն , ու շինելուն տեղը կաւերեն : Աւտի աս տեղը Քրիստոսնէ իր տղոցը հետ կանկ առաւ : Բայց Գլթութիւնը ըսաւ . եկո՛ր միջամուխ ըլլանք , միայն Թէ զգուշութիւն ընենք : Ընտոները աղէկ նայեցան իրենց քայլափոխներուն , ու շատ դժուարութիւն քաշելով մէկալ կողմը անցան :

Եւ սակայն Քրիստոսնէ քիչ մնայ անոր մէջը պիտի իյնար , և ան ալ չէ Թէ մէկ

կամ երկու անգամ : Հիմայ իսկոյն միւս կողմը անցածնուն պէս իրենց անանկ եկաւ Թէ մէկ խօսք մը կը լսէին՝ որ կըսէր իրենց . « Երնէկ անոր որ կը հաւատայ Թէ պիտի կատարվի ան բաները՝ որ հէրը մէջ ըսվեցաւ իրեն » * :

Ընտոները կրկին առաջ դացին . ու Գլթութիւնը կըսէր Քրիստոսնէին . Թէ որ ես քեզի պէս աղէկ պատճառ ունենայի յուսայլու Թէ ան Կեղ Գուլը սիրալիք ընդունելութիւն պիտի դոնամ , կարծեմ Թէ Յուսահատութեան Տիղմը չի պիտի վախցունէր զիս :

Պատասխան տըլաւ միւսը ու ըսաւ . Գուն քու վէրքդ գիտես՝ ու ես իմ . ով իմ ընտիր բարեկամս , ամէնիս ալ մեր ճամբուն վէրջը հասնելէն առաջ բաւական յանցանք պիտի ունենանք : Քանզի մենք որ ասանկ պատուական փառքեր ստանայլու միտք ունինք , ու մեր բայմութիւն Թշնամիները որ ան երջանկութեանէն մեզ արգիլել կուզեն , ուրիշ բան մը չի կրնանք յուսալ՝ քան Թէ բարմապատիկ վախերու ու որոզայթներու պիտի պատահինք , ու մեզ առողները կը ցածնուն չափ տառապանք ու նեղութիւն պիտի յարուցանեն մեր վըայ :

Ներքին :

Շատ անձինք կան որոնք իրենց եղած անիրաւութեանը ներում շնորհելու տկարութիւն կը հաւարին : Ես կարծիքիս նայելով երկին ու երկրի մէջ ամէնէն տկար էակը Եստուած պիտի ըլլայ , ինչու որ երկնի ու երկրի մէջ մէկը անոր չափ ներում չի շնորհեր :

Ներխոյն-իւն Եստուածոյ :

Հրեշտակները երբոր պատգամաւորութեամբ Եստուծմէ աս աշխարհս կը բերկրովին , բնաւ իրենց Երկինքէն գուրս չեն ելար , բնաւ իրենց Պատգամին տեսութեանէն չեն հեռանար . ասանկ մենք ալ՝ երբոր հոս ու հոն մեր գործքերուն կը պատաղինք , պարտինք ջանալ միշտ մեր աչքին առջը ունենալ զԵստուած , միշտ իր ներկայութիւնը միտքերնիս պահել :

Սրտն :

Են որ կրօնքը մարգարիտ մը ու գանձ մը ըլլալ չի համարիր , ան որ անիկա չի գտնար էվելի բերկրութիւն ըլլալ քան Թէ բնու , անոր ճըշմարիտ բնութեանը անձանթ է :

* Գլ . ա . 45 :

Խոյս—Ս էր :

Բանայն գլուխ 'ի ցաւս , և ամենայն սիրտ 'ի տրամութիւն : Յոսից մինչև ցգլուխ չէր 'ի նմա առողջութիւն . վէրք . այտումն . և հարուածք խղկայթեալք : Կ . ա . 5,6 :

Փտած վէրքերը՝ կամ խոցերը մարմինին նեղութիւններուն մէջը խիստ տանջողականը են : Սեփատունին ու աղքատին առական մէջը , (Ղ Գ . 4 . 47 .) կրկարդանք որ Վաղարաին մարմինը խոցերով լեցուն էր :



որ շուները կուգային ու կրգէին երբոր ինքը դռանը տակը պառկած էր : Ըս վէրքերը իրենց զգուերի ու վնասակար ըլլալնուն համար՝ այլաբանական ձևով չարիքները ու մեղքերը նշանակելու կրգործած վին Սուրբ Գիրքին մէջը . մանաւանդ բորտութիւնը , որ խոցերուն խիստ գէշն է՝ բնաբանիս մէջը մեղքը իմացունելու կրգործածվի որ չարիքներուն խիստ գէշն է : Ըրէից եկեղեցիին ու ազգին չար ու թշուառ վիճակը հոս կրստորագրվի մարգարէով , որ ժողովուրդոց ամէնքը ամենացածէն մինչև թագաւորին անանկ չարացան սրտովնին ու վարքովնին , որ ազգին գլխէն մինչև ոտքը՝ անարգներն ալ ազնուականներն ալ զգուերի եղան Մտուածոյ առջևը : Երբոր մեղքը անձին վրայ տիրէ , հոգին առողջութիւն չունենար . ուստի հոգին բորտ մարմինի մը պէս է վէրքերով՝ և հարուածներով՝ ու փտած խոցերով ծածկըված :

« Հիւանդութիւնը » երբեմն կրնշանակէ մեղքին ախտը , ինչպէս որ հոս տեղը . և անոր համար անոնք որ կրգգան թէ մեղաւոր են , շտակ դէպի Վրիստոս երթալ կառաջնորդվին իրենց հոգիներուն մի միայն բժշկին պէս : Եկեղեցոյ Պաշտօնակաները կրնան մխիթարել , բայց չեն կրնար բը

ժըշկել : Ուստի մեղքին խոցերուն նայելով՝ կրսէ մի Տէրը . « Ողջերուն բժիշկ պէտքը չէ , հապա հիւանդներուն » : Սաբլ . Թ . 12 :

Երբեք Մտուածոյ դէմ գործած մեղքերէն հիւանդութիւն կրգգանկոր մի . և սիրտիդ մէջ ցաւ մը կիմանանկոր մի այնչափ սաստիկ զՄտուած վշտացունելուդ համար . ուրեմն գնա՛ շտակ Վրիստոսին ան Բարի Բժիշկին , որ ինքը կարող ալ է ու կամեցող ալ քեզ բժշկելու : Ինքը եկաւ « սրտով կտորածները բժշկելու » . ինքը երկրի բոլոր մեծութիւնները բանի տեղ չի սեպեր , բայց կրգորացունէ զը ջայեալ սիրտերը » :

Մտից էվել ալ ի՞նչ կուգէք
Ո՛վ մեղաւորք խեղճ ու թշուառ
Հիւանդ խոցոս՝ և ինչ որ էք
Յիսուս պատրաստ է ձեզ փրկել :
Ուստի եկէք շտակ իրեն
Որ գթած է և ուժ ունող
Ս'ի երկրայիք ալ դուք նորէն
Օ՛ի կարող է և կամեցող :

Բնական փրկութեամբնէն հարցումներ :

Օգետար :

Հարց . Ինչո՞ւ համար ամառը ձերմակ զգեստ կրհագնուի :

Պատաս . Ընոր համար որ մութ գուները ելելի ջերմութիւն կրնդունին . բայց ձերմակը ամենէն ելելի կարասքսէ ջերմութիւնը , ու զովագոյն զգեստ է : Զմեռը ձերմակ հանդերձը աղէկ է , ինչու որ քիչ ջերմութիւն կառնէ ու դուրս կուտայ մարմինէն : Բնական անասունները ընդհանրապէս բաց գոյն մորթ ունին : Ղերմակ ձիերը միանգամայն քիչ կրտաքնան արևին մէջը՝ ու քիչ կրմտին ձմեռը , քան թէ մութ գոյն ունեցողները :

Հ . Ինչո՞ւ համար Գիանելան կամ Թաղիքը ձըմեռը տաք կրպահէ մարդը՝ ու ամառը հալելէն կրպահէ սառնը :

Պ . Ընոր համար որ ձմեռը թող չի տար որ մարմինին տաքութիւնը դուրս անցնի , ու ամառը թող չի տար որ դուրսի ջերմութիւնը սառնի ներգործէ :

Հ . Ինչո՞ւ համար վիզը՝ երեսը՝ և այլն , դիշերման ցուրտ օդէն պահպանելու համար փաթթելը աղէկ է :

Պ . Ընոր համար որ ամէն մէկ անդամ շունչը դուրս տրվելուն քիչ մը ջերմութիւն կրմնայ փաթթած լաթին մէջը՝ մանաւանդ թէ որ բրդեղէն ըլլայ ան , և ան ջերմութիւնը ամէն անդամ շունչ աննելուն դուրսէն թողբերուն մէջը վազող պարօդ օդին հետը խառնըվելով կրբարեխանէ անիկա :

Թաղիք , բէշ :

Ինչո՞ւ համար հարբուխ ունեցող անձը .
 իր բերնին ու երեսին դեմ քթան թաշկինակ մը
 բռնելով էկելի թեթեւութիւն կրգգայ քան թէ
 բանական թաշկինակ բռնէր :

Պ. Ընտր համար որ քթանը դիւրութեամբ
 կրնո՞ւնի ջերմութիւնը ու արտաւորին բորբո-
 քումը կրնուաղեցունէ . բայց բանակը ազատ
 անցք մը չի տալով ջերմութեան՝ ցաւին աստի-
 ճանք կեկեցունէ :

Ինչո՞ւ համար անսիրայգէս մարմինին վա-
 յէն քթան շապիկ հագնելը աղէկ չէ :

Պ. Ընտր համար որ քրտինքը կրծծէ ու ան-
 կորուստ կրպահէ և շուտով կը թրչի անով . ան-
 հաճոյ ցրտութիւն մը կրգգացունէ , խոնաւու-
 թեամբ իսկոյն կը թրչի , ու ջերմութիւնը շու-
 տով կանցունէ :

Ինչո՞ւ համար բրդեղէն հանդերձը աղէկ
 է :

Պ. Ընտր համար որ մարմինին արտաշնու-
 թիւնը դիւրութեամբ թող կուտայ իր մէջէն
 անցնել . ամէն պարագաներու մէջ մարմինին
 ջերմութիւն տալու գորու թիւն ունի , դիւրու-
 թեամբ չի թրչի , ջերմութիւնը կամաց կամաց
 գուրս կուտայ , ու իր կազմութիւնը է կակուղ
 փափուկ և թեթեւ :

Ինչո՞ւ համար լայն հանդերձները էկելի
 տաք կրպահեն քան թէ նեղերը :

Պ. Ընտր համար որ լայն հանդերձ հագնելով
 հանդերձին ու մարմինին մէջը եղած դատարկ
 տեղերը օդու լեցուն կը լայ , ու մարմինին տա-
 քութիւնը շուտով չանցնիր ան օդէն :

Ինչո՞ւ համար քափոււր՝ պղպեղը մուշկը՝
 և այլն . չեն կրնար ցեցէն պահել հանդերձը :

Ինչո՞ւ համար որ աս նիւթերուն մէկը ներ-
 գործութիւն մը չունէր ցեցերուն հաւկիթին . և
 մինչև անգամ երբեմն ցեցերը հանդերձին մէջը
 աս նիւթերուն քովերը կը կենան . ու ջերմութե-
 նէն զատ բան մը չի կրնար սպաննել զանոնք :
 Բայց ջերմութեան դեմ բռնըկելով անտարակոյս
 կամ կը թափին և կամ կը քասակին : Աթոպ-
 պուրկի թանգարանին վերակացուն քափուրին
 անօգուտ ըլլալը ստուգելու համար ցեցին հա-
 կիթները անոր ծուխին բռնելով տեսաւ որ կեն-
 դանացան :

Ինչո՞ւ համար մայր ծառին ու նոճիին
 փայտը ու ասոնց նման փայտերը որգնակեր չեն
 ըլլար :

Պ. Ընտր համար որ անոնք անուշահոտ իւղեր
 ունին իրենց մէջը . ու ամէն ցնդական կամ հո-
 տաւոր գոյացութիւնները փայտերուն մէջը ամե-
 նափոքր որդերը ու ձձիները ապականալու յա-
 տուկ զօրութիւն մը ունին :

Թաշկինակի աստիճանը :

Մաւանականաբար ամէն անձինք պատե-
 հութիւն ունեցած են տեսնալու մանա-
 ւանդ Յուլիս և ()գոստոս ամիսներուն
 պարզ ու խաղաղ դիշերները՝ օդին մէջը

Հարբուխ . նեղակէ : Քափուր . չեմփիլի :
 Յեց . կեմէ :

Թուչող լուսաւոր մարմիններ , որոնք կամ
 վար երկրիս վրայ կիջնան , և կամ մթնո-
 լորտին մէջը յանկարծ աներևոյթ կը լըլան :
 Ըստ նոյն երևոյթը կրտեսնելի ձևուվան
 խիստ ցուրտ պայծաւ դիշերներն ալ .
 բայց ամառվան երեւոյածները էվելի մեծ
 են , ու իրենց լուսափայլութիւնովը էվելի
 նմանութիւն ունին աստղն : Մինչև անգամ
 աս օրերս շատ անձինք կը դառնըին՝ որոնք
 կը կարծեն թէ անոնք ճշմարտապէս ինկած
 կամ թափառական աստղեր են . և որովհե-
 տև երեւակայութիւնը միշտ սատոյի ուժ մը
 կունենայ տգէտներուն մտայը մէջը , անոր
 համար աս սուտ աստղերուն վրայով զանա-
 զան գուշակութիւններ ու մարգարէական
 նախասացութիւններ կը լըլան :

Մարդ կը կարծէ թէ անոնց յանկարծա-
 կի արագութեամբ աներևոյթ ըլլալը ու մեր
 հողագունտին վրայ աղբեցութիւն մը չու-
 նենալուն ճշմարտութիւնը բաւական է ա-
 նոնց աստղ ըլլալու կարծիքը մերժել .
 բայց ուր որ միտքը աղէկ գանձըված չէ
 ճշմարտութիւններով , երեւակայութիւնը
 գերազոյն իշխանութեամբ կը թագաւորէ
 հոն , ու խիստ անհաստատ և անտեղի
 սնապաշտութիւններու հաւատք ընծայել
 կուտայ :

Ըրդ՝ օդին մէջը թափառող աս կարծա-
 տև թէպէտ և լուսափայլ մարմինները
 քանի մը խօսքով ըստ բաւականին կրնան
 բացատրուիլ : Մեր երկիրը հանապազ
 գոլորշիքներ կամ ցնդական մասունքներ
 վեր կը հանէ մթնոլորտին մէջ . աս գոլոր-
 շիքներէն կաղեր կը ձևանան՝ կը խտանըվին
 ու կը վաւեն իրենց զօրութիւնովը ու ըն-
 թայքովը , և գրեթէ իսկ և իսկ իրենց
 յատուկ բնութեանէն կը զրկըվին ու անոնք
 նուաճող ու իր մէջը ընդունող մթնոլոր-
 տին հետ կը խաւանըվին :

Երբեմն մէտէորական մասունքները էվե-
 լի աւատութեամբ հաւքըված ըլլալով՝ ու
 մթնոլորտին վիճակը իրենց կազն բնու-
 թեանը էվելի յարմար ըլլալով տարապայ-
 ման մեծութեամբ ու շքեղ պայծառու-
 թեամբ մէտէորաներ երեւցած են , ու օդին
 մէջը այնչափ երկար դացած են՝ որ հազար
 մղոն տեղ յաջորդաբար տեսնըված են : Ը-
 սանկ էր ան մէտէորան րը 1783ին երեւցաւ ,
 որ ոչ միայն Սկովտիայի ու Բնդղիայի շատ

մասերուն մէջ տեսնուիցաւ , հապա նաւ
 կալիսիւն Օսթիանոյ (հառակալի) փարիզի
 ու Կանթիսի մէջ : Իր երևոյթը էր լու-
 սանոր ու գրեթէ բոլորակ մարմին մը , որ
 քանի յառաջացաւ զանապոն մեծութեամբ
 բազմաթիւ գետակներու բաժնրվիցաւ , ու
 բոնց ամէնը իրենց եակէն լուսաւոր շա-
 ւիղ մը կը ձգէին : Իր աներևոյթ ըլլալուն
 անհամար ՚ի զննին կեցողներուն վկայու-
 թեամբը հեռուէն թնդանթ պարպրվելու
 ձայնի պէս ձայն մը հանեց . . . ապիկա
 խիստ նշանաւոր բան մըն է , որովհետև
 փիլիսոփաներուն քննութեանը նայելով իր
 բարձրութիւնը երկրի մակերևոյթէն յե-
 սուն մոզնէն պակաս չէր կրնար ըլլալ :

Բայց ասոնք կազմ բնութիւն ունեցող
 մեծերաներ են՝ որոնք մթնոլորտը կը շի-
 ջուցանէ ու իր մէջը կը նկղզմէ , ու պէտք
 չէ որ ասոնք ան պնդակազմ ու ծանր մար-
 միններուն հետ շփութենք՝ որ մեծամարմին
 ու բոցավառ գունտերու պէս մթնոլորտին
 մէջը կը պըտրտին ու բարձր ձայնով մը կը
 փարտտին , որոնց երբեմն կը հետեւի խել
 մը մեծութիւն ու ծանրութիւն ունեցող քա-
 ղերու անձրև մը : Կերկայ դարուս սկիզ-
 բին Կորմանտի մէջ Բահնի մօտերը
 մթնոլորտին մէջը ասանկ գունտ մը երև-
 ցաւ , որ մեծ բարձրութիւն ունէր ու խիստ
 արագութեամբ կը յառաջանար , ու հրեղէն
 գունտի մը երևոյթը ունէր : Եւ կը քաղքին
 վրայ հասածին պէս քիչ մը ատեն անշարժ
 կեցաւ հոն , ու ետքը բարձր շառաջումի
 ձայներով պատուեցաւ , ու քաղաքին բո-
 լորտիքը մինչև երկու փարտախ ու կէս հե-
 ուտորութեան զանազան տեղեր քարեր
 վար նետեց բայց ոչ քաղաքին վրայ : Ըս
 տարօրինակ զիպուածիս լուրը Բաղդիա-
 ցոց տէրութեանը հասաւ , ու զիտնական
 անձն մը խրկրվեցաւ անիկա հանդերձ իր
 պարագաներովը քննելու : Մարդը աւանց
 տարակուսի ստուգեց թէ ան ինկած քարե-
 րը թէպէտ և տեղ տեղ երկու կամ իրեք
 տրամի չափ ծանրութիւն ունէին . բայց ու-
 ըիշ տեղեր տասնութը լիտրէն մինչև քը-
 սան լիտր ծանրութիւն ունեցող քարեր
 ինկած էին :

Աշխարհիս շատ ուրիշ մասերուն մէջը՝
 ու խիստ տարբեր կլիմաներուն տակ , ինչ

պէս Օվիցերիլի , արևելեան Հնդկաս-
 տանի մէջ Պնարխի , Բնդղիայի ու հու-
 նաստանի մէջ ասանկ մեծերաներ երևցած
 են , ու իրենց եակէն քարի հեղեղ մը՝
 կամ անհաղին մեծութեամբ միայն մէկ քար
 մը իջած է :

Աս սքանչելի մարմիններուն բազմաթիւ
 թեանքը վրայով բնականաբար շատ տար-
 բեր կարծիքներ կը լած են : Մմանք կարծե-
 ցին թէ ասոնք մոլորակներու մասունքներ
 են՝ որոնք անանկ սաստիկ զորութեամբ ան-
 նոցմէ բաժնրված են որ երկրիս շարժմանը
 տակը ինկեր են , ու ետքը իրենց յատուկ
 ծանրութիւնովը երկրիս վրայ իջած են :
 Բնդհակառակը քանի մը զիտնական բնազն-
 նիներ կարծեցին թէ անոնք մթնոլորտին
 մէջը քիմիքապէս ձևացած են . հեղուկնե-
 րը զատվելով ու թանձր մասերը իրարու
 մօտենալով ու մեծ կամ պղտիկ մարմիններ
 ձևացունելով , իրենց շարժմանը արագու-
 թիւնովը կը բռնկին , ու անանկ մանր մաս-
 ներու կը բաժնրվին , որոնք հարկաւ երկ-
 րիս վրայ կը յնան :

Աս վերջին կարծիքս էվելի հաւանական
 կերևայ . և ան ալ երկու պատճառով :
 Մէյով որ՝ աս մեծերաները չէ թէ կա-
 տարեալ պնդակազմ վիճակի մը մէջ վար
 ինկած են , հաղա մաժուցիկ ու կէս հալած
 վիճակի մը մէջ , ինչպէս 1790ին ամառ-
 վան մէջ Վուանայի կուլինէ քաղաքը ի-
 ջած քարէ հեղեղը : Մէյ մալ որ՝ ամէն ա-
 նոնք որոնք որ քիմիքական վերլուծութեան
 տակ մտան միւլենոյն նիւթերը ունէին իրենց
 մէջը , որոնց երկրիս մասունքները ըլլալուն
 վրայ անհնար էր վէճ ըլլալ :

Հասոյմական պերուլիան :

Բրիտանիայէն մինչև Կիբատ գետը ուր
 որ կրնանք նէ երթանք , ու Հուովմայի
 երբեմն ունեցած հարստութեանը զօրու-
 թեանք՝ ու իմաստութեանը նշանները կը
 զընանք : Երբեմն իր զօրութիւնը միտ-
 քերնուս կը ներկայանայ հին ամրոցները ու
 բերդերը տեսնալովնիս . երբեմն իր հա-
 ըրստութիւնը և ընդհանուր իմաստութիւնը՝
 կամ դոնէ արհեստներու մէջ իր յառաջա-
 զիմութիւնը կը ներկայանայ՝ իր ճարտարա-
 պետական շէքերը՝ իր բարակ արհեստնե-

րու օրինակները և իր ճամբաները տեսնալովնիս :

Հռովմէական տէրութեան բոլոր քաղաքները մէկգումէկու հետ և իրենց մայրաքաղաքին Հռովմայի հետ հասարակաց մեծածախ ճամբաներով հազորդութիւն ունէին : Ըստ ճամբաները Հռովմայի իրաւագէտներուն ժողովարանէն Վարդան սկըսելով Իզախայի մէջէն կանցնէին բոլոր նահանգներուն մէջ կրտարածէին , ու նոյն տէրութեանը սահմանագլուխները հասնելուն միայն կրվեր ջանային : Ըստնց մէկը որ Հռովմայէն սկըսած փոքր Բսիայի ու Բսրեստանի մէջէն կանցնէր մինչև Երուսղէմ , 2068 մղոն երկայնութիւն ունէր :

Ըստ ճամբաները իրենց երկայնութիւնը ցուցնող մղոնաքարերով բաժնարված էին , ու մէկ քաղաքէն մէկալը կերթային ուղիղ գծիւ , բնական արգելքները ու մասնաւոր անձանց ստացուածքները շատ քիչ խնայելով : Ղամբուն վրայ պատահած լեռները կրճեղբովէին , խիստ լայն ու արագընթաց գետերուն վրայ մեծամեծ կամարներ կը ձրգովէին , ու գեղեցիկ դաշտերը և այգիները կը բաժնէին կամ կաւերէին : Ըստ ճամբաներուն շինութեանը պարտապող բաճկորները ստուգված չէ թէ ո՞վ էին . հաւանականաբար Հռովմայեցի զինուորները պիտի ըլլան , խտրութեան ժամանակ ապուրջին պարագած :

Ըստ ճամբաները մեծահատոր քարերով յատակված էին : Իրենց կազմութիւնը աւանակ հաստատուն էր՝ որ այսչափ դարեր անցնելէն ետքը տակաւին անոնց մնացորդները կրտեսնովին : Հռովմայի մօտ քանի մը տեղովնք ճամբաները կճեայ քարերով յատակված էին :

Հինգ կամ վեց մղոն միջոցին տուններ շինված էին ապա ճամբաներուն վրայ : Ինքնակալները թագաւորութեան սահմանին աւմէն կողմերէն կանուխ լուր առնելու համար կանոնաւոր սուրհանգակներ հաստատուցին : Բետի ճամբուն վրայի ամէն մէկ տունին մէջը միշտ 40 ձի կը պահվէր , ու ասոնց միջնորդութեամբը՝ տունէն ՚ի տուն ձիերուն փոփոխութեամբը՝ օրը հարիւր մղոն տեղ լուր տանելը զիւրին էր :

կճեայ . Երբեք էն :

Թէպէտ կայսրին ատենը աստիճանաւոր իշխան մը Բսորեստանի Բնտիոք քաղաքէն սուրհանգակով կուտանդնուպոլիս դէպ , ու անգամ մը 665 մղոն տեղը հինգ ու կէս օրը հասաւ զիշերներն ալ հետ առնելով : Բսիկա մինչև անգամ ապ օրս ցամաքային ճամբորդութեան բաւ բաւականին արագընթացն է : Բայց ապ քաջընթաց ձիերը գրեթէ միայն տէրութեան գործքերուն ծառայելու համար էին , և հազու թէ մասնաւոր քաղաքացիի մը թոյլտրութիւն կը լար զանոնք գործածել :

Բարեբարութիւն :

Բնական է մարդու բարեբար անձին երախտագէտ ըլլալ : Մենք ամէն ալ կրնանք բարեբար անձինք ըլլալ : Ըն որ անէճքի դէմ օրհնութիւն կուտայ , նախատանքի դէմ աղօթք կրնէ , ասելութեան դէմ սէր կը ցուցնէ , բարեբար անձի մը տեղը կանցունէ զինքը : Ըստնկ վարժուողին վրայ ամէն մարդիկ կը զմայլին ու կը գովեն զանիկա : Թէ որ թշնամիդ անօթի է՝ հաց տուր իրեն . և թէ որ ծարաւ է ջուր տուր իրեն . ասանկ ընելով կրակի կայծակներ կը դիզես անոր գլխուն : Պատշաճաւոր բնաւորութեան դարձունելու համար անիկա մեղմելու ու կակուղցունելու շիտակ ճամբան ասիկա է : Բայց ասոր դէմ ճամբայ բունելը միայն կը խստացունէ զինքը , ու իր թշնամութիւնը առաւել ևս կը օստկացունէ ու անբժշկելի կրնէ : Բսիկա է սուրբ Բետարանին ոգին : Ըստնկ Ոգին աշխարհս երջանկութեամբ կը լեցունէ :

Չանուցում :

Չօրանտայի կրօնինկ քաղաքին մէջ կաղանդին օրը՝ ինքնայօժար պրեցման դիպուած մը պատահեցաւ , [կըսէ Խնայուրկի օրագիրը] թէ 50 տարեկան կնիկ մը՝ որ սովորութիւն ունէր խմելք գործածել՝ զօրաւոր գինիէն այնչափ շատ խմեց , որ երբ կրակին մօտ գնաց , իր շունչը լեցված ըլլալով ըմպելի ոգիներով , յանկարծ աւանակ բռնկեցաւ , որ ներքին այրու մն պատճառեց իրեն , ու իր մարմինը գրեթէ ածուխ կտրած գտնուվեցաւ :

Փարիզի մէջ մարդասիրական ընկերութիւն մը կայ՝ որուն նպատակը աղքատներուն ձրիաբար կերակուր բաշխել է : Տոմսակներ կը արվի աղքատներուն իրենց ընծայվելու կերակուրին վրայով , որով կընդունին մեծ աման մը ապուր կամ խաշած լուսիկա :

Ըստնց տոմսակի ալ աղքատ մը չորս փարայ տարու ըլլայ նէ նոյն կերակուրը կընդունէ : Ըստ բաշխումը առաւելուն մինչև իրիկուն կը լայ . ապ ընկերութիւնը ժողորմը Լուիս թագաւորը հաստատեց : Ըստ ընկերութեանը ամէն 50 Վրանք տըրողը 100 տոմսակ կընդունէ աղքատներուն բաժնելու համար . ու թուղթ մին ալ կը տրվի իրեն՝ որով մէկ կամ մէկէն ելլելի հիւանդներ մինչև բոլոր տարին բժշկին ձրի նայել տարու համար :